4.07.2023
351-07

ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի
ղեկավար Սամվել Առաքելյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «ՀՀ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՍԴՈ-1175 որոշման մեջ նշված է՝ *«Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է նաև, որ ելնելով, մասնավորապես, ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի կանոնադրությունների վավերացման, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացման և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորության ճանաչման, ինչպես նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու իրավական նախադրյալների ապահովման փորձառությունից, ՀՀ Ազգային ժողովը Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության իրավական երաշխիքների ամրապնդման տեսանկյունից քննության առարկա պետք է դարձնի մի շարք օրենսդրական ակտերում համարժեք փոփոխություններ կատարելու հարցը, որոնց թիվը, համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված տեղեկանքի, անցնում է երկու տասնյակից»*:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել Արդարադատության նախարարության կողմից ներկայացված տեղեկանքի պատճենը կամ փաստաթղթի հասանելիությունն ապահովող ակտիվ հղում:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am